

ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ՍՏՈՐՋՐՅԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի և Մարսելի ստորգետնյա հետազոտությունների և սուզումների կենտրոնի միջև 13/10 15.04.2010թ. ստորագրված համաձայնագրի շրջանակներում 2012թ. հունիսի 11-ից շարունակվեցին Սևանա լճի ստորջրյա հետազոտությունները:

Նախօրոք քննարկված պլանի համաձայն հետազոտություններն իրականացվեցին Սևանա լճի Հայրավանք տեղամասում:



Նկար 1. Աշխատանքային հանդիպում Սևանա լճի ափին

Ելնելով ինստիտուտի գիտական հետաքրքրություններից նշված տեղամասում կատարվեցին ստորջրյա նկարահանումներ և փորձանմուշների հավաք:

Թեպետ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի սարքավորումները հնարավորություն են տալիս հատակամերձ շերտերից ձեռք բերել փորձանմուշներ, սակայն սարքերը ոչ միշտ են ընդգրկում գիտական հետաքրքրություն ներկայացնող հատվածները: Այդ առումով սուզորդների կատարած աշխատանքը անգնահատելի է:

Ստորջրյա դիտարկումները նպատակ ունենին.

ա. բացահայտել մակրոֆիտներով հարուստ տարածքները և գերիշխող տեսակները,

բ. պարզել Հայրավանք տեղամասում խեցգետնի պոպուլյացիայի տարածման սահմանները և էկոլոգիական մի շարք առանձնահատկություններ:

Սևանա լճի Հայրավանք դիտակետի մակրոֆիտների հետազոտությունների համար նշված կայանի տարբեր խորություններից (1-4մ) 2012թ-ի հունիսի 12-ին ջրասույզների կողմից կատարվել է մակրոֆիտների նմուշառում:

Լաբորատոր պայմաններում բացահայտվել է մակրոֆիտների տեսակային կազմը, որը ներկայացված է աղյուսակ 1-ում.

1մ խորության վրա գրանցվել են մակրոֆիտներից *Chara vulgaris* (L.) և *Chara fragilis* տեսակները:



Նկար 1. *Chara fragilis*

2,5 մ խորությունում ջրիմուռներից բացահայտվել է *Fontinalis antipyretica* (Hedw.) տեսակից մեկ առանձնյակ:

3.2-3.7մ խորությունում, որտեղ ջրի ջերմաստիճանը եղել է 18 °C մակրոֆիտներից գրանցվել է *Utricularia vulgaris* (L.) տեսակին պատկանող արմատների մնացորդներ:

4մ խորությունում բնահողը հիմնականում ավազային է: Այս խորությունում մակրոֆիտներից բացահայտվել են *Myriophyllum spicatum*-ը և *Zannichellia palustris* (L.) բույսի մնացորդները:



Նկար 2. *Myriophyllum spicatum*



Նկար 3. *Potamogeton pectinatus*

Ճմ խորությունում մակրոֆիտներից հայտնաբերվել է *Potamogeton pectinatus* տեսակը:

Աղյուսակ 1

Սևանա լճի Հայրավանք կայանի տարբեր խորություններում հայտնաբերված մակրոֆիտների տեսակները

Ինքնի	Էնթոմոֆայտ	1Մ	2.5Մ	3.2-3.7Մ	4Մ
<i>Utricularia vulgaris</i>		-	-	+	-
<i>Zannichellia palustris</i>		-	-	-	+
<i>Chara vulgaris</i>		+	-	-	-
<i>Chara fragilis</i>		+	+	-	-
<i>Fontinalis antipyretica</i>		-	+	-	-

Նշված մակրոֆիտները լայնորեն տարածված են նաև Սևանա լճի այլ հատվածներում:

Զգալի հետաքրքրություն էին ներկայացնում հատակային կենդանիների հետազոտությունները: Ըստ սուզորդների տեղեկությունների այս հատվածը հատկապես հարուստ էր խեցգետնի առավել երիտասարդ առանձնյակներով՝ մեկից երկու տարեկան խեցգետնիկներով, որոնց չափերը տատանվել են 3.1-4.5սմ սահմաններում: Հանդիպող առավել խոշոր կենդանիները կրում էին ձվեր: Խեցգետինները թաքնվելու նպատակով օգտվում էին ոչ միայն քարերի կամ այլ սուզված առարկաներից, այլև թաղվում էին ավազի մեջ:

Նկարահանած կադրերից հստակ երևում է, որ խեցգետինը շատ խաղաղ գոյակցում է լճի ձկնատեսակների հետ: Բեղյու ձկնատեսակը առանց տագնապի

նշաններ ցույց տալու, գրեթե քավելով խեցգետնի շոշափելիքի օրգաններին հանգիստ լողում է նրանց կողքով: Խեցգետինների կողմից նույնպես չի դրսևորվում ակտիվություն:

Հետքորթության է արժանի սուզորդների մեկ այլ դիտարկում: Նրանց պնդմամբ Շորժայի տեղամասում նախորդ տարիներին հանդիպում էին հսկայական քանակով խեցգետիններ: Մինչդեռ 2012թ. նշված տարածքը գրեթե զուրկ է կենդանիներից: Կան ենթադրություններ, որ այս հատվածում մեծ է եղել անթրոպոգեն ազդեցությունը և կատարվել է ընտրողական որս:

Նշված դիտակետում հանդիպել է նաև Սևանա լճի համար սովորական տեսակ համարվող, քաղցրահամ ջրերի բնակիչ Spongillidae ընտանիքի *Ephidatia fluviatilis* (Lam.) տեսակի սպունգը: Անցյալ դարի սկզբին այս տեսակը հանդիպում էր ալեկոծության ստորին գոտում, որտեղ քարերի վրա առաջացնում էր գորգեր, իսկ *տարածվածության* ստորին սահմանը համընկնում էր մակրոֆիտների տարածվածության սահմանների հետ (Арнольди, 1929):

Ըստ Գ.Ֆրիդմանի (Фридман, 1950) սպունգերը առատորեն հանդիպում էին լավ պաշտպանված ծովածոցերում, քարերի վրա, թափանցում էին մինչև 18 մ խորություն: 90-աններին այն հանդիպում էր քիչ քանակներով լճի բաց տարածքներում մինչև 12-15մ խորություններ (Հակոբյան, 2006):

Սուզորդները Կենդանաբանության ինստիտուտի աշխատակիցներին են հանձնել նաև հատակից հանված ոսկորների նմուշներ, որոնց մշակումը սակայն ավարտված չէ:

ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ Հիդրոէկոլոգիայի և

ձկնաբանության ինստիտուտի ղեկավար՝



Է.Ղուկասյան